2 հուլիսի 2015 թվականի N 815 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման N 4 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) «IV. Սևանի տարածաշրջան» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով.

«7. «Սևանի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը և «Սևանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն: «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

8. «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ծառայությունները տեղակայել նախկին «Սևանի հիվանդանոց» և «Սևանի պոլիկլինիկա» փակ բաժնե-

տիրական ընկերությունների մասնաշենքերում: «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում նախատեսել 32 մահճակալ՝ ցերեկային ստացիոնար բուժման սրահով՝ ըստ աղյուսակի՝ պոլիկլինիկական նեղ մասնագիտական ու ախտորոշիչ ծառայությունները միավորելով հիվանդանոցային համանուն ծառայությունների հետ.

Աղյուսակ

Նորաստեղծ «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժանմունքները	**Մահճակալների առաջարկվող թիվը**
Վիրաբուժական	10
Թերապևտիկ և մանկական բաժանմունք	10
Ինֆեկցիոն ծառայություն թերապևտիկ բաժանմունքի կազմում	2
Մանկաբարձագինեկոլոգիական	10
Ինտենսիվ թերապիայի և շտապ օգնության բաժանմունք (ինտենսիվ թերապիայի և շտապ օգնության բաժանմունքի մահճակալների քանակը չի ներառվել բժշկական կենտրոնի մահճակալների ընդհանուր թիվը և մահճակալների ծանրաբեռնվածությունը հաշվարկելիս)	(8)
Ընդամենը	32

9. Մինչև 2019 թվականի ավարտը «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական մասնաշենքի հարևանությամբ կառուցել և շահագործման հանձնել բժշկական կենտրոնի նոր հիվանդանոցային մասնաշենքը, որտեղ կտեղակայվեն բժշկական կենտրոնի բոլոր հիվանդանոցային ծառայությունները: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար կառուցել դիարանի նոր շենք:

10. «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցումից և նոր հիվանդանոցային մասնաշենքի կառուցումից հետո բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով նվազեցնել «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության

կանոնադրական կապիտալը: «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման արդյունքում ազատել և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով հանձնել «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հողատարածքը՝ շուրջ 2,165 հեկտար մակերեսով, հիվանդանոցային երկու մասնաշենքերը 2155,5 քառ. մետր և 1086,2 քառ. մետր մակերես տարածքներով, պահակատան մասնաշենքը՝ 33,0 քառ. մետր մակերես տարածքով, էլեկտրական ենթակայանի մասնաշենքերը՝ 52,6 քառ. մետր մակերես տարածքով և դիարանի շենքը՝ 78,6 քառ. մետր մակերես տարածքով:».

2) «V. Ճամբարակի տարածաշրջան» բաժնի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ճամբարակի պոլիկլինիկայի տուբերկուլյոզային կաբինետը վերանվանել տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետ, դրան վերապահելով շարունակական դիսպանսեր հսկողության գործառույթ: Կազմակերպել խորխի բակտերիոսկոպիկ հետազոտության գործառույթ՝ պոլիկլինիկայի լաբորատորիայի կազմում:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական համակարգում կգործեն՝

1) 1 հիվանդանոց՝ Վարդենիսում.

2) 3 բժշկական կենտրոն՝ Գավառում, Մարտունիում և Սևանում.

3) 2 պոլիկլինիկա՝ Գավառում, Վարդենիսում.

4) 1 ծննդատուն՝ Մարտունիում.

5) 2 առողջության կենտրոն՝ Վարդենիկում և Ճամբարակում.

6) 30 առողջության առաջնային պահպանման կենտրոն՝ գյուղական վայրերում:

Ծառայությունների առաջարկվող վերակազմակերպման արդյունքում մահճակալային ֆոնդն առկա 355 մահճակալից կկրճատվի 327-ի (Գավառ՝ 100, Մարտունի՝ 135՝ ներառյալ Վարդենիկը), Վարդենիս՝ 30, Սևան՝ 32, Ճամբարակ՝ 30): Կազատվի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը կհանձնվի շուրջ 11000 քառ. մետր մակերեսով տարածք:»:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝

1) մինչև 2016 թվականի փետրվարի 29-ը ավարտել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 4 հավելվածի «IV. Սևանի տարածաշրջան» բաժնի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված աշխատանքները՝ «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միաձուլման գործընթացն իրականացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

2) մինչև 2016 թվականի մարտի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հաշվետվություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 4 հավելվածի «IV. Սևանի տարածաշրջան» բաժնի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված աշխատանքների կատարման մասին.

3) մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ավարտել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 4 հավելվածի «IV. Սևանի տարածաշրջան» բաժնի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

4) մինչև 2020 թվականի հունվարի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հաշվետվություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 4 հավելվածի «IV. Սևանի տարածաշրջան» բաժնի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված աշխատանքների իրականացման մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ